

ՏԱՍԵՔՈՐԻ ՏԱՐԻ

# ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կիս տարվանը 6 ռուբլ. և սուսնին նամակները 5 կոպեկով:  
Թիֆլիսում դրվում են միմիայն անդրադրուստի մեջ:  
Օտարապարտադիր գինում են սպասվում:  
Կազմակերպիչը: Թիֆլիս. Պեդակույա «Մուսակ»

Խմորագրությունը լույս է տեսնում 10—2 ժամ (Բացի կիրակի և տոն օրերից):  
Յայտարարությունները լույս են տեսնում միայն:  
Յայտարարությունները համար գծարվում են խորհրդանշան թանկին 2 կոպեկով:

## Մ Շ Ա Կ

ԼՐԱԿՐԻՆ ԿԱՐԵԼԻ Է ԳՐԱԿԵԼ

Կ Է Ս Տ Ա Ր Ո Վ

Այսինքն յուլիսի 1-ից ներկայ 1881 թվի, մինչև յուլիսի 1-ը 1882 թվի:

Բաժանորդությունները գինը 6 ռուբլ է: Գրվում համար պետք է ուղղակի գրվել խմորագրությանը հետևելով հասցեով: Թիֆլիս. Պեդակույա «Մուսակ»

## ԲՈՎԱՆԿԱՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ամբոստիս վարդապետ Ռուբինյան և նրա հանգանակությունը: Նամակ Ղուրբայից, Նամակ Խմորագրին, Նամակ Խմորագրին, Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ 8-ՍՈՒԹԻՒՆ, Գերմանիա:—ԽՈՒՆ 1, ՈՒՐԵՐ:—ՀԵՌՈՒՄՆԵՐ:—ՊԱՏԱՍՈՒՆՆԵՐ:—ՑԱՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՆՔ ԿՕՂԵՑ:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԲՐՈՍԻՍ ՎԱՐԿԱՊԵՏ ՌՈՒՔԻՆԵԱՆԸ ԵՒ ՆՐԱ ՀԱՆԿԱՎՈՒԹԻՒՆԸ

Այստեղ քաղաքացու հոգս պատճառով հարցերից մեկը այժմ Ամբոստիս ֆ. Ռուբինյանն է: Արդեն երկու շաբաթ է, որ նա այստեղ է և մի քանի անգամ էլ եկե-

## Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԳԻՒՂԱՑԻՔ ՓԱՐԻՋԻ ՊԱՇԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ:—ՋՐՈՑՑ ԱՆՁ ԿՕՂԵՑ

Այս ընտանիքը ապրում էր Շանրոզում շատ երջանակով: Ուղիղ իմ պատուհանին տակը գտնվում էր հաւարունը և իմ այնտեղ ապրելուս տարվա վեց ամիսը մասամբ միանում էր այդ ընտանիքի գոյությունը հետո: Գեռ չը լուսացած են լուսում էր ինչպես ամուսին այդ մասում էր արտաք, լծում էր ձին սայլակի մէջ և ճանապարհ էր ընկնում դեպի Քորթել կանաչեղեններ ծախելու: Յետոյ վեր էր կենում կինը, հագցնում էր երեխաներին, կուտ էր տալիս հաւերին, կըթում էր կովը և ամբողջ առաւօտը սանդուղքների վրա լսվում էր մեծ ու փոքր փայտե հողաթափների թրխվածիկը: Կէսօրվայ մօտ ամեն բան հանդարտվում էր: Հայրը գաչուսում էր, երեխանքը՝ ուսումնարանում, մայրը լուս լուսաց էր փռում բակում կամ կարում էր, նստած դըրան մօտ, հսկելով ամենափոքրիկի վրա: Ժամանակ առ ժամանակ մարդ էր անցնում ճանապարհով և նա խօսում էր նրա հետ, շարունակելով իր գործը:

Մի անգամ օգոստոսի վերջին, —նոյն այն անբաղ զոգոստոսին, ևս լսեցի ինչպես նա սասց ղրացու հուն:  
—Էրեք, ինչ պրուսացիք... Մի՞թէ նրանք արդեն Ֆրանսիայում են:  
—Նրանք արդեն Շալոնում են... Պատասխանեցի ևս պատուհանից: Այս խօսքը շարժեց նրա ծիծաղը:  
Սենայի ու Ուազի այս փոքրիկ անկիւնումը զիւղացիք չէին հաւատում պրուսացու արշաւանքին:  
Այսու ամենայնիւ ամեն օր անց էին կենում բեռնաւորված սայլեր: Տեղական բնակիչների ղեկավար փակվում էին և այս գեղեցիկ ամսում, երբ օրերը այնպէս երկարում են, այգիները այլ

ղեցում քարոզ է խօսացել: Նրա այցելությունն նպատակը յայտնի է ամենքին, փող ժողովել էր պրուսի ղեռ ևս նոր բացվելի երկրագործական ուսուցիչներին համար, որի առիթով նա ահա՛ երկու տարուց աւելի է մի ծայրից միւս ծայր է շրջում բոլոր հայաբնակ քաղաքները—մի կողմից փող ժողովելով և միւս կողմից գանազան տեսակ իրեղեններ (քաթանեղէն և այլն) գնելով ապագայ ուսուցիչների համար: Զարմանալի բան է. դեռ ուսուցիչների քարերը չը կան—հայր սուրբը հոգացել է արդեն երկու տարի առաջ աշակերտների զգեստները: Ալեքսանդրապոլում մի քանիսը հետաքրքրվեցան իմանալու այս հեռու տեսուցիչի ան պատճառը: Հայր սուրբը այնպէս մեկնութիւն է տուել այդ յայտնուգն՝ հետաքրքրվողներին... «1879 թ. Նիժնի-Նովոգորոդի տնօրէնական քաթանեղէն ապրանքը շատ էժան էր (?), ուստի բարեք համարեցաք կանխապէս պատրաստութիւն տեսնել մեր ուսուցիչներին համար:»

—Հայր սուրբ, ախար այդ ապրանքը, որ դուք աւել էք երկու տարի առաջ, կը փախի (եթէ արդէն չէ փախի) մինչև ուսուցիչների հիմնվելը:  
—Ոչ, ինչ չի լինի. նա շատ ապահով տեղ է դրած և երբէք չի փախի:»

ևս չէին ծաղկում և համարեա անապատ են դառնում չըջապատած վանդակապատերի մէջ: Փոքր առ փոքր իմ դրացիներն էլ սկսեցին անհանգիստ լինել: Ամեն մի նոր ուղեգրութիւնը լուսնի տրամեցում էր: Նրանք իրանց զգում էին բարձի թողի արուած: Յանկարծ մի գեղեցիկ առաւօտ թմրեկանացին զիւղի չորս կողմից: Մեքը (Maire) հրամայել էր. որ կովերը և բոլոր պաշարեղենները տանն փարկը և այնտեղ ծախեն, որպէս զի պրուսացիներն ոչինչ չը թողնեն: Ամուսին այրը գնաց փարկը: Այդ ճանապարհորդութիւնը շատ տխուր էր: Մեծ ճանապարհին ձգվում էին մէկը միւսի հետից կարասիներով բարձած սայլեր, խոզերի երամակներ, ոչխարների հօտեր՝ որոնք ընկնում էին անխնայի տակ: Հորթները կապկապված բառաչում էին սայլերի մէջ, անցնելով խրամների մօտով: Ինչ կարասիներով, գոյնը գնացած բազկաթոռներով, սեղաններով և հայելներով լցված փոքր սայլերի ետևից գնում էին բնակիչները, որոնք հարկադրված էին թողնել իրանց տունը ու տեղը: Կարելի է երևակայել, ինչ յուսահատութիւն էր փրկել բնակիչներին և հարկադրել տակն ու վրա գնում էլ պարտավելու: Ղյնուորական մարտութիւններով և զբաղվում էին ինչքան կարողանում էին, որ մոռանայ իր դատարկ շտեմարանը և չը ցանած արտերը: Բայց կիրը անգործ մնալով աւելի էր ճանճարնում և չը գիտէր ինչ անել: Իր մեծ աղջկանց տուել էր ուսուցիչներին. այստեղ առանց այգու՝ մտալ սենեակներումը նրանք շնչառապա էին լինում և մտաբերում էին իրանց քաղցր գիւղական վանքը, ուր պէտք էր գնալ, անցնելով անտառի միջով կէս վերտառաչով: Մայրը տանջվում էր, տեսնելով որ իր զաւակները տխրում են: Բայց ամենին աւելի նրան անհանգիստացնում էր ամենափոքրիկը:

Այնտեղ, գիւղումը, այդ փոքրիկ թէ բակում և թէ սենեակներում—միշտ հետևում էր մօրը դրան չէմբից օնցնում էր այնքան անգամ, ինչքան և ինքը մայրը, մոցնում էր իր կարմիր թաթիկները տաշտի մէջ, նստում էր դռների մօտ հանգստանալու, երբ նա սկսում էր գործել: Բայց այստեղ պէտք էր բարձրանալ մինչև չորրորդ յարկը սև սանդուղքներով: ոտները սահում էին:

—Լաւ. դուք տեսնում էք, հայր սուրբ, թէ էժան էր քաթանեղէնը, դրա համար առաք. բայց մի՞թէ հաշիւ չէք անում, որ ձեր առած ապրանքը դեռ տարիներ կը պարկի, նրան պահեստի փող պէտք է, նրան շատ հոգի, նրան տեղ հասցնելու մտքս պէտք է. այդ զուամրնելն էլ նկատողութիւնն առեք, տեսնեք էժան կը նստի, թէ թանգ:

Հայր սուրբը լուս է:  
Հիմա տեսնեք, որ քան յարմար է որ քան օգտաւէտ այն հանգանակութիւնը, որի համար աշխատում է հայր Ամբրոսիոսը:  
Նա ի՞նչ այդ հանգանակութիւնը բողոքովին աւելորդ է մեր գաւառաւան կան քաղաքներին համար, որոնցից իւրաքանչիւրը առանց այն էլ ունի շատ հոգներ ու ցանք. նա վնասում է տեղական անհրաժեշտ կարիքներին, խելով այդ կարիքների համար հարկաւոր գումարը: միւլդիւն այդ գումարների մէջ մեծ կարողութիւն է զգացվում: Այն առնեք օրինակ Ալեքսանդրապոլ քաղաքը. նրա շատ կարիքներ պետք էր փոքրիկ մէկը. յայտնի է, որ Ալեքսանդրապոլի Ամենափրկիչ եկեղեցու գաւթում շինված է մի փառաւոր ուսուցիչների (նոր շինութիւն հոգեւոր դպրոցի), որի ծախքը մօտաւորապէս հաս

նում է 17 հազար ռուբլու. բայց նա դեռ աւարտած չէ և ունի անհրաժեշտ ծախսեր 3000 ռուբլու չափ: Ո՞վ է հոգալու այդ ծախսը և երբ պիտի հոգացվի, քանի որ խօսք կայ առաջիկայ սեպտեմբերին բանալու այդ ուսուցիչները և հոգեւոր դպրոցի 40-ամեակը նոր շինութիւն մէջ կատարելու: Արկնում ենք—ո՞վ է հոգալու այդ անհրաժեշտ ծախսը. ժողովուրդը կարո՞ղ է արդեօք ամեն բանի համար տալ, երբ նրան անդադար այնպիսի հանգանակութիւններով են խեղդում, որոնց ապագան շատ տարակուսելի է, երբ քաղաքացիք առանց այն էլ շատ ծախսեր ունեն իրանց իշխական դպրոցի վրա, որ ահա՛ 10 տարիներ քաշ են տալիս և՛ երեխ դեռ էլի քաշ պիտի տան...:

Երկրորդ՝ այդ հանգանակութիւնը հազիւ թէ օգտաւէտ լինի ամբողջ ազգի համար՝ եթէ չտեսնեք վնասակար: Միացեալ ընկերութիւնը, որի համար այնքան ջանք և աշխատութիւն է դրած, բայց որը դարձեալ նեղ միջակի մէջ է—զրկվում է այն գումարներից, որոնք պէտք է մտնէին նրա դանձանակը. խօսք Միաց. ընկերութեան նըպատակը ձրիապէս ուսում տարածել է, չէ՞, խօսք մենք ամենքս մի տարի առաջ՝ քանի որ Կարոցասիրաց, Կրկիկեան և Արարատեան ընկերութիւնները չէին միացել—

Նեղ վառարաններում թոյլ կրակ էր վառվում. պատուհանները բարձր էին և նրանց միջից տեսնվում էր միայն մոխրագոյն ծուխը և խոնաւ սպիտեղայ տանիքները:

Ճշմարիտ է, այստեղ էլ կար մի փոքրիկ բակ, որտեղ նա կարող էր խաղալ, բայց դժնապահուհին չէր թողնում: Այնտեղ, գիւղում, ամեն մարդ իր գլխի տէրն է և ունի իր փոքրիկ անկիւնը. որի մասին ինքը հօգս է քաշում: Բընակարանը ամբողջ օրը բաց է. երեկոյան քաշում են մեծ փայտե նիզը և բոլոր տան վրա տիրապետում է այն գիւղական խաւար գիշերը, երբ մարդ շատ քաղցր քնում է: Երբնմ շունը հաջում է լուսնակի վրա, բայց ոչոք տեղից չէ շարժվում: Իսկ փարկում, աղքատ տններում զուսնապանտոնին ինքը լրակատար տէր է: Մտնուկը չէ համարձակվում մէնակ ցած իջնել, նա վախենում է այդ շար կնուլից որ հարկադրել էր վաճառելու նորա այծը, որովհետև նա բակը կեղտոտում էր:

Խեղճ մայրը այլ ևս չը գիտէր, թէ ինչ մտաձէր, որ գուարճացներ իր տաղակացող երեխային: չէնց որ ճաշը վերջանում էր, նրան հագցնում էր ինչպէս անող գնային և ման էր անում քաղցրի փողոցներում և ծառուղիներում: Բուզուսում, վախեցած, իրան կորցրած մանուկը հագնուցում էր իր չորս կողմը: Նրան միայն դըստեղեցում են ձմաները, միայն նրանց է նա ճանաչում և միայն նրանք կարող են շարժել նրա ծիծաղը: Մայրը նոյնպէս ոչ մի բանով չէր ուրախանում: Նա գնում էր դանդաղ մտածելով իր տան և իր կայքի վրա: Երբ տեսնում էին նրանց միասին մանդալիս—մօրը բարեխաղ զէմքով, մաքուր հագուստով, ողորկ սանրած մազերով և մանկանք կրող զէմքով, հաստ կրկնակօշիկներով, չէ կարելի չը հասկանալ, որ նրանք գիւղից եկած գաղթականներ են և բոլոր սրտից ցաւում են իրանց կորցրած մաքուր օդի և գիւղական առանձնացած ճանապարհների վրա:  
Լ. Տ. Մ.

անդադար ասում էինք՝ հարկաւոր է միութեամբ գործել, հարկաւոր է միանալ. էլ ի՞նչու թող տալ, որ Ֆլան վարդապետը երկր կրկնապարծական ուսումնարան բանայ, միւսը փոխտոփայական դպրոց հիմնէ և դրանով թէ՛ արգելք լինի Միացեալ ընկերութեան գործին, թէ՛ փաստէ նրա եկամուտներին: Ասացէք խնդրեմ, ո՞վ կարող է երաշխաւոր լինել, որ վաղը չի գայ Պօլսկց մի Վիտնիստո վարդապետ և կոնդակը ձեռին՝ չի սկսի հանգանակութիւն յօգուտ բացվելի փոխտոփայական դպրոցի:— ո՞չ թէ կարնոյ նահանգում, այլ օրինակ՝ Ախլաթում, կամ Մուշում, կամ Մանիկումում, քաղաքի անուններ շատ կարող ենք ասել — հարկաւոր չէ՞, չենք տայ նուիրաւորութիւն՞. նա քարոզներ կը խօսի, կերթայ աղաներին այցելութեան, կը խնդրէ, կաղաչէ, կը համոզէ— և իր ուզածը կանէ: Միւս օրը գուրս կը գայ մի ուրիշը, և այսպէս անվերջանալի մի շարք արեղաների, որոնք «չայրնետաց սիրոյ համար», տարիներ կը շրջեն քաղաքից քաղաք, լուկուշտ կուսին, ստատ եկամուտներ վեր կառնեն, ժողովուրդը «կը մտիթարեն» և հազարներ թօփ անկով, կեննեն կերթան: Եւ այնուհետեւ սպասիր, որ փոխտոփայական դպրոց պէտք է բացվի... իսկ միւս կողմից թօղ Միացեալ ընկերութիւնը նուիրութիւն կրէ, ո՞ւմ պէտքն է. ո՞ւմ պէտքն է, թէ վաղը այդ ընկերութիւնը ստիպված կը լինի մէկ մէկ փակել իր ուսումնարանները և իր ուսուցիչները յետ կանչել:

Բայց Միացեալ ընկերութիւնից մի ուրիշ հիմնարկութիւն էլ կայ, որը գրաւած է մեր համակրութիւնը և որին նպատակը մեր պարտքն է: Արդէն տարուց աւելի է, որ Խրիմեան հայրիկը՝ առանց մեզանից մի կողմի խնդրելու, բացել է վարձաւայ փանջում մի երկրագործական դպրոց. դպրոցի վարչութիւնը յանձնած է հմուտ երիտասարդ նշան Մագաթեանին, որ գործնական նապէս կատարելագործվի և Կերմանիայում և արդէն գործը բաւականին առաջ է զընացել: Բայց այդպիսի մի մեծածախ հիմնարկութիւն կառավարելը երեւում է՝ զբժուար է առանց կողմնակի նուիրաւորութիւնների ուստի հայրիկը մի երկու անգամ «Մեղու» լրագրի միջոցով զիմեց սուսահայ հասարակութեանը, նպատակն ինքնուրու մեզանից՝ տարեկան գոնէ 3 հազար ռուբլ: Սակայն՝ մինչև այժմ համարեա ոչինչ նուիրաւորութիւն ժողոված չէ. ի՞նչ է, սպասե՛ք, որ վարձաւայ երկրագործական դպրոցն էլ փակվի. իսկ զանազան վեղաբարձներ տարիներով շրջեն հայաբնակ քաղաքները և մի այլ երկրագործական ուսումնարանի անունով փողեր ժողովեն, ծախսեր անեն, աշակերտներ համար շապիկացու և վարտիքացու անեն, պարտքեր վըծարեն և ո՞վ գիտէ ե՞րբ ուսումնարանի հիմքը ձգեն... Եւ իրաւի, դժուար է հաստատապէս ասել — կը բացվի՞ արդեօք կարնոյ երկրագործական դպրոցը. մենք կարծում ենք, որ հասարակութիւնը ապահով չէ, թէ իր նուիրած գոն մարը նպատակին կը հասնի. և ահա ինչու. ա) — ինչպէս անցեալ տարի տեսանք, կան այնպիսի անակնկալ դէպքեր, երբ հ. Բուրիսեանը «իր նուիրական պարտք կը համարի երկրագործական ուսումնարանի նուիրաւորութեան գումարից հազար ռուբլի նուիրել յօգուտ սովորոց» («Փորձ», 1880, № 3, հ. Բուրիսեանի նամակը): Ո՞վ կարող է ասել, որ էդուց էլ չի պատահի մի այսպիսի անակնկալ կարիք. և այնուհետեւ

հայր սուրբը դարձեալ իր նուիրական պարտքը կը համարի հանգանակած գումարից ցրուել այստեղ-այնտեղ: Այս մէկի (Փորձ, 1879 № 5, յայտարարութիւններին մէջ) — «Եթէ չեմ սխալվում, կարծեմ չայլակն էր, որ իր ժամանակին հերքեց այդ տեղեկութիւնը «10 հազար արժէք ունեցող» շէնքի վերաբերութեամբ, համարելով նրան շատ չափազանց ցածր և միայն մի քանի հազար դուրուշի արժէք ունեցող: Իսկ ինչ վերաբերում է «փոքր ինչ պարտուց» — դրա մասին դժուար է մի խօսք ասել, որովհետեւ ինքը հայր Բուրիսեանը չէ բարեհաճել ո՞չ մի տեղ որոշ կերպով նշանակելու իր պարտքի գումարը. ուստի այդ փոքր պարտքը կարող է լինել և՛ 100 ռուբլ, և՛ 1000 ռուբլ, և՛ 10 հազար ռուբլ՝ նայելով հայր սուրբի նպատակներին: Այսպէս ուրեմն՝ հ. Բուրիսեանի հանգանակած գումարից հանելու է նախ սովորոց նուիրած հազար ռուբլը և այլ այսպիսի անակնկալ դէպքերին հարկաւորած նուէրները, յետոյ՝ «փոքր ինչ պարտք», ապա՝ զանազան իրեղէնների առած գումարը, որ կարծեմ 3—4 հազարի է համարում և որը պէտք է անշուշտ կորած համարել, որովհետեւ քաթանակէն և այլ այսպիսի ապրանքները կը փոխն, կը փձանան մինչև ուսումնարանի հիմնվելը: Ել որքան գումար պէտք է ժողովէ հ. Բուրիսեանը, որ այս բոլոր խոշոր ծախսերը հանելուց յետոյ՝ դարձեալ մեծ դրամական միջոցներ ունենայ ամբողջ երկրագործական ուսումնարանի հիմնելու համար. խօսմ նա զանազան պիտի չը դիզէ...»

Սրանից յետոյ մնում է մեզ հաստատ մնալ մեր համոզմունքներին և կրկին անգամ մի առ մի մէջ բերել այդ կետերը. 1) որ հ. Բուրիսեանի հանգանակութիւնը անյարմար է և անօգուտ մեր գաւառական քաղաքների համար, փաստելով նրանց առօրեայ անհրաժեշտ կարիքներին, 2) նա փաստակար է այնպիսի մի համազգային ընկերութեան գործունէութեանը, ինչպէս Միացեալ ընկերութիւնն է, խլելով նրա եկամուտները: 3) հազիւ թէ իրագործվի երկրագործական ուսումնարանի դադարաւոր հայր Բուրիսեանի ձեռքով, քանի որ հանգանակած գումարը եւ նուիրութիւնը և զեռ էլի կարող է եւ թարկուել անակնկալ և անարակալ ծախսերի ու պատահարի հարկերով... Այս հիմունքներով՝ բոլորովին իրաւացի կը լինի խնդրել հ. Բուրիսեանին, որ առանց այլ և այլի, առանց կանխապէս զանազան իրեղէնների գնելու շտապի ուսումնարանի հիմքը ձգելու, և եթէ մի տարուց յետոյ էլ չիրագործվի ենթադրեալ երկրագործական ուսումնարանը, այնուհետեւ հայ հասարակութիւնը՝ չորս տարի իզուր սպասելով, կարող է պահանջել, որ իր նուիրած գումարը տեղափոխվի Միացեալ ընկերութեան զանձանակը, այն ընկերութեան, որի թէ՛ լայնածաւալ գործունէութիւնն է մեզ յայտնի և թէ՛ դրամական զգալի կարողութիւնը: Եւ այս տեղափոխելու ըսկզբունքը օրինակ տուեց մեզ ինքը հ. Բու-

րիսեանը, նուիրելով յօգուտ սովորոց 1000 ռուբլ «յանուն երկրագործական արուեստի և վարժարանի նուիրաւորութեան գումարից՝ ի բր և առաւել ստիպողական և աւելի կարևոր պահանջ...» («Փորձ», 1880 թ. համ. 3 հ. Բուրիսեանի նամակը) — «Բուրիսեանը ընկերութիւնը ունի հոգալու «առաւել ստիպողական և աւելի կարևոր պիտոյքն էր» — քան հ. Բուրիսեանի քարոզած երկրագործական ուսումնարանը, ապա ուրեմն պարզ է, որ հայր սուրբի հանգանակած գումարը՝ կամ ամբողջովին, կամ մասամբ պէտք է յանձնվի Միացեալ ընկերութեանը և վարձաւայ փանքի երկրագործական վարժարանին, որ արդէն գործում է: Շատ աւելի լաւ է պահպանել եղածները, քան նորերը հիմնելու անունով՝ եղածներին էլ փաստել:

Ահա թէ ինչ է մեր կարծիքը հ. Ամբրոսիոս Բուրիսեանի ձեռնարկած հանգանակութեան մասին:

ՆԱՄԱ: ՂՈՒԲԱՅԻՑ

Յուլիսի 8-ին  
Յիրաւի շատ զարմանալի է մեր հասարակութեան անտարբերութիւնը դէպի ամեն ազգային գործերը: Սրանից տաս տարի առաջ չուէցի պ. Պօղոս Ալեքսանդրեան տեսնելով Ղուբայում ուսումնարանի կարեւորութիւնը, ձեռնարկեց այդ գործին և ինքը նուիրեց 1000 ռուբլ, թիֆլիսցի պ. Գ. Խզմիրեանց էլ հետեւելով առաջինի օրինակին նուիրեց 200 ռուբլ. բայց օրանից գումարեցան անձինք, որոնք կարծ ժամանակում իրանց առատ նուիրաւորութիւններով հասցրին գումարը 2500 ռուբլու և բացին քաղաքի մէջ մի դպրոց Հայոց հոգևոր դպրոց անունով: Առաջին անգամ ընտրված հոգաբարձուները գործը լաւ տարան, բայց երբ նրանց ժամանակը վերջացաւ, — ուսումնարանը սկսեց օրից օր ընկնել:

Այժմ դպրոցը խղճալի դրութեան մէջ է. Հոգաբարձուները անտարբեր են, ուսուցիչներ չը կան, կամ եղածներն էլ անպիտան են: Այժմ մեր դպրոցը կարելի է չեղած համարել. Զուր փողեր, զուր աշխատանք, Հայը միայն սկզբից տար է կղզում գործին, քանի նա նորութիւն է, իսկ չուտով ամեն բանից ձեռք է վեր առնում և անտարբեր կերպով թող է տալի, որ շինածը ինքն իրան քանդվի: Հայը միայն սէր ունի դէպի շինելու ու ստեղծելու, իսկ մի անգամ չինանա ու ստեղծածը՝ աւելորդ է համարում պահպանել: Հայի ոչ մի գործ տնտեսականութիւն չունի:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 20 յուլիսի  
«Մեղու» վերջին համարներից մինի մէջ կարդացելով կարապետ Մատինեանց ստորագրութեամբ մի նամակ, որի մէջ նամակագիրը «Մըշակի» թատրոնաւերի ակնարկութիւնները դերասանների չը մասնակցելուս Աստղիկի ներկայացմանը շարժաբարձութիւններ և դրախօսութիւններ է անուանում, այսինքն, թէ Աստղիկը դերասաններին չէ խնդրել և հետևապէս դերասաններն էլ ինչ հարկից ստիպված պէտք է իրանք առաջարկէին Աստղիկին, որ ցանկութիւն ունեն մասնակցելու նրա ներկայացմանը: Նամակի զԸԼ-խաւոր միտքը, գոնէ ճոճքը սա է համառօտապէս:

Հետեւալ պարոնների՝ Գրիգոր Պարոն-Սարգսեանցի, Գրիգոր Տէր-Մարկոսեանցի, Ստեփան Սարգսեանցի, Սմբատ Հովհաննիսյանի մօտ պ. կարապետ Մատինեանցը հաւատացնում էր, թէ Ամատունին ասել է, եթէ դերասաններից մէկը մասնակցէ Աստղիկի ներկայացմանը, նա էլ խմբի մէջ չէ կարող լինել: Սմբատ Հովհաննիսյանը իր կողմից աւելացնում էր «Պարոն կարապետ, չեմ կարծում թէ Ամատունին այնքան անփոհանձն գտնվի, որ այդպիսի բան ասած լինի»:

բայց կարապետ Մատինեանցը պնդում էր համոզական եղանակով. «ասել է, Հովհանն, ասել է, մեզ Չմշակեանը ասաց»:

Պարոն Տէր-Վաթեկեանցը մեզ վերադարձնելու, բացի Սարգսեանցից, ասում էր՝ «եղբայր, ես սիրով կը մասնակցէի, բայց խօսելի կարող Աստղիկի պատճառով զրկվել իմ ապրուստից» և շարունակում էր «մանաւանդ, որ ես Աստղիկի սնցեալ տարվայ բենեֆիտի տոմսակներից քսան ռուբլու չափ ծախել եմ և փողը մինչև այժմ չեմ տուել, գոնէ այդ դուրս կը դար» —

«Մեղու» մէջ Մատինեանցի յօդուածը ազգական օգտին արվելու ներկայացման կրկնութեան ժամանակ, օրիորդ Վարդուհի (մշակական խմբի դերասանուհի է) անս թէ ինչ ասաց, իրան կարապետ Մատինեանցին, Աղայեանցի, Գրիգոր Պարոն-Սարգսեանցի, Մկրտիչ Տէր-Սիմեոնեանցի, Գէղէն Միրզաբեկեանցի, Լևոն Վարձեկեանցի, Սմբատ և Աղասի Հովհաննիսյանի և օրիորդ Մեղիքեանցի ներկայութեամբ. «Ինչ խնդրեց Աստղիկը, որ մասնակցեմ իր ներկայացմանը, որովհետեւ ես էլ լսել էի, որ մի բան կայ, ասացի նրան, որ գնամ հանգամանքները լինեամ և այնուհետեւ կտրական խօսքս կասեմ» — Եկայ Ալեքսանդրեան այգիում պատանկի կարապետ Մատինեանցին և Տէր Վաթեկեանցին. սրանք ասացին, որ Ամատունին հրամայել է, եթէ մեր դերասաններից մէկը համարձակվի մասնակցել Աստղիկի ներկայացմանը, նա էլ խմբում չի լինի»:

Մատինեանցը կարմրեց, գոյնը մի քանի տեսակների փոխեց... և ինչ, ընդհանուր ծիծաղը և խօսքուսականութիւն և ամօթ քեզ, կարապետ — բաւերը ներկայ եղողների վերջ դրեցին խօսակցութեանը:

Այժմ այս բոլորից յետոյ, ընթերցողին ենք թողնում, թէ ինչ անուն կարելի է տալ Մատինեանցի յօդուածին: Ճշմարտութեան դէմ գրել սրան — նրան հաճոյանալու համար պատիւ է բերում «մարդ» անուն կրողին, պարոն Մատինեանց:

Յարգելի խմբագիր, ճշմարտութիւնը ունակիս արած տեսնելով, չը կամեցանք լուի, քանի որ մեր լուրքեամբը խղճմտանքի դէմ գնացած կը լինենք: Այս նամակը ուղարկեցինք «Մեղուին» բայց նա չուէց սպել: Ուստի խնդրում ենք բարեհաճեցէք ճշմարտութեան անունով տպել մեր լրագրի մէջ այս մեր մի քանի տողերը:

Գ. Պարոն-Սարգսեանց, Լ. Վարձեկեանց, Օր. Մեղիքեանց, Աղասի Հովհաննիսյան, Գրիգոր Տէր-Սարգսեանց, Սմբատ Հովհաննիսյան:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մոսկովա, 20 յունիսի  
Ինչպէս յայտնի է «Մշակի» ընթերցողներին — այդ լրագրի 72 համարում լոյս տեսաւ մի յօդուած «Մի քանի խորհրդակցութիւններ և լազարեան ճեմարանի առթում»: Թէև յօդուածի ստորի որոշակաւ դրած է «Պետերբուրգ» և լ. ստորագրութիւնը, այնուամենայնիւ գումարեցան այստեղ անձինք, որոնք — ո՞վ գիտէ ինչ զգացմունքներից զրկված — վերադարձին այդ յօդուածը ինչ և զեռ մինչև այսօր շարունակում են իրանց անհիմն և անտեղի գրաբարձութիւնները: Յայտնում եմ նրապարակապէս, որ վերոյիշեալ յօդուածի հեղինակը ես չեմ:

Կ. Խալաթեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

ԱՍՏՐԱԽԱՆԻ հայոց հոգևոր դպրոցների հոգաբարձութիւնը հրաւիրում է պատրաստական դասատուների համար հայոց ընթերցանութեան ուսուցիչ, ոչ փոքր 20 դաս ունենալով շարութեան, տարեկան 400 ռուբլ ուճիկով: Ճանապարհի ծախսը 50 ռուբլ հոգաբարձութեան կողմից է: Պէտք է ներկայացնել ուսման վկայական մինչև օգոստոսի 10-ը, իսկ ուսումը կը սկսվի սեպտեմբերի 1-ից:

ԱՍՏՐԱԽԱՆԻ մեզ գրում են, «Բուրիսեան» մի եղբունագործութիւն պատանկի Արամեանցին և իր զննարկութեամբ կին վարձում է Արամեանցի նուս մի կառք Ախալցխա գալու համար: Ճանապարհին կառապանը շեղվելով շուէից, զբոլը